Ռեզիդենտ իրավաբանական անձանց բանկային կամ առարկայազուրկ մետաղական հաշվի բացման փաստաթղթերի ցանկ

1. Կանոնադրությունը՝ իր բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ.
2. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրամադրված պետական միասնական գրանցամատյանից քաղվածք.
3. Բաժնետիրական ընկերությունների համար՝ նաև արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակ կամ բաժնետերերի ռեեստրից քաղվածք՝ անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր վարող մասնագիտացված կազմակերպության կողմից.
4. Գործադիր մարմնի ղեկավարի կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարի անձը հաստատող փաստաթուղթը և սոցիալական քարտի համարը կամ նշում անձի՝ սոցիալական քարտից հրաժարվելու մասին (նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում սոցիալական քարտ չի պահանջվում).
5. Հաճախորդի կանոնադրական կապիտալի 10 և ավելի տոկոս բաժնետոմսի, բաժնեմասի, փայի սեփականատերեր հանդիսացող ֆիզիկական անձանց համար՝ անձը հաստատող փաստաթղթերը.
6. Հաճախորդի կանոնադրական կապիտալի 10 և ավելի տոկոս բաժնետոմսի, բաժնեմասի, փայի սեփականատերեր հանդիսացող իրավաբանական անձանց համար՝ սույն ենթահավելվածի 1-ին, 2-րդ 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը.
7. Լիազորված անձի դեպքում՝ լիազորագիրը.
8. Հաշվի բացման դիմում-պայմանագիրը.
9. Ստորագրությունների նմուշների և կնիքի (առկայության դեպքում) դրոշմի քարտը.
10. Ստորագրությունների նմուշում որպես 1-ին և 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող անձանց անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.

<u>Ծանուցում.</u>

<u>Բոլորը փաստաթղթերի պատճենները ներկայացվում են՝ «Իսկականի հետ ճիշտ է» նշումով, ստորագրված իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարի կողմից և հաստատված Հաճախորդի կնիքով (Հաճախորդի ցանկությամբ), բացառությամբ լիազորված անձի կողմից ներկայացված բնօրինակ լիազորագրերի:</u>

<u>Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կարգով» սահմանված այլ փաստաթղթեր:</u>